

Կ-706-05.08.2020-ՄԻ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Երեխայի իրավունքների մասին» 1996 թվականի մայիսի 29-ի ՀՕ-59 օրենքի 32-րդ հոդվածում 2-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ մասեր.

16 տարին լրացած երեխայի հոգեբուժական միջամտություն ստանալու կամ դրանից հրաժարվելու վերաբերյալ գրավոր իրազեկված համաձայնությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, տալիս է երեխան, եթե՝

- 1) բժիշկ-հոգեբույժի կարծիքով 16 տարին լրացած երեխան ունակ է հասկանալու հոգեբուժական միջամտության կամ դրա բացակայության հնարավոր հետեւանքները,
- 2) այդ տեղեկությունները չեն վնասի 16 տարին լրացած երեխային,
- 3) կոյուրացնեն նրան հոգեբուժական օգնության եւ սպասարկման տրամադրումը:

Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված պայմանների բացակայության դեպքում 16 տարին լրացած երեխայի հոգեբուժական օգնությունն ու սպասարկումն իրականացվում է «Հոգեբուժական օգնության եւ սպասարկման մասին» օրենքի 24-րդ հոդվածով սահմանված ոչ հոժարակամ հոսպիտալացման կարգով, եթե հոգեբուժական հանձնաժողովի եզրակացությամբ նրանց նկատմամբ անհրաժեշտ է իրականացնել հոգեբուժական միջամտություն:

16 տարին չլրացած երեխայի գրավոր իրազեկված համաձայնությունը տալիս է նրա օրինական ներկայացուցիչը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Երեխայի հոգեբուժական օգնությունը եւ սպասարկումն իրականացնելիս նրա կարծիքն ամրագրելը պարտադիր է:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կ-706-05.08.2020-ՄԻ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Երեխայի իրավունքների մասին» 1996 թվականի մայիսի 29-ի ՀՕ-59 օրենքի 32-րդ հոդվածում 2-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ մասեր.

16 տարին լրացած երեխայի հոգեբուժական միջամտություն ստանալու կամ դրանից հրաժարվելու վերաբերյալ գրավոր իրազեկված համաձայնությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, տալիս է ~~և~~ երեխան, եթե՝

- 1) բժիշկ-հոգեբույժի կարծիքով 16 տարին լրացած երեխան ունակ է հասկանալու հոգեբուժական միջամտության կամ դրա բացակայության հնարավոր հետևանքները,
- 2) այդ տեղեկությունները չեն վնասի 16 տարին լրացած երեխային,
- 3) կոյուրացնեն նրան հոգեբուժական օգնության եւ սպասարկման տրամադրումը:

Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված պայմանների բացակայության դեպքում 16 տարին լրացած երեխայի հոգեբուժական օգնությունն ու սպասարկումն իրականացվում է «Հոգեբուժական օգնության եւ սպասարկման մասին» օրենքի 24-րդ հոդվածով սահմանված ոչ հոժարակամ հոսպիտալացման կարգով, եթե հոգեբուժական հանձնաժողովի եզրակացությամբ նրանց նկատմամբ անհրաժեշտ է իրականացնել հոգեբուժական միջամտություն:

16 տարին չլրացած երեխայի գրավոր իրազեկված համաձայնությունը տալիս է նրա օրինական ներկայացուցիչը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Երեխայի հոգեբուժական օգնությունը եւ սպասարկումն իրականացնելիս նրա կարծիքն ամրագրելը պարտադիր է:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում ~~պաշտոնական հրապարակումից երեք ամիս հետո~~ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-706-05.08.2020-ՄԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	«Երեխայի իրավունքների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված (Կ-706-05.08.2020-ՄԻ-011/1)	Առաջարկվում է Նախագծի 1-ին հոդվածում «տալիս է նա» բառերը փոխարինել «տալիս է երեխան» բառերով:	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն: Նշված փոփոխությունը տեխնիկական բնույթի է և անհրաժեշտ է Նախագծի 1-ին հոդվածով օրենքի 32-րդ հոդվածում լրացվող դրույթներում համաձայնությունը տվող սուբյեկտին հստակեցնելու և տարընթերցումներից խուսափելու համար:	Առաջարկը ընդունվել է
2.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	«Երեխայի իրավունքների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված (Կ-706-05.08.2020-ՄԻ-011/1)	Առաջարկվում է Նախագծի 2-րդ հոդվածում «պաշտոնական հրապարակումից երեք ամիս հետո» բառերը փոխարինել «պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից» բառերով:	Ընդունվել է: Նախագծի 2-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն: Ի սկզբանե Նախագծի 2-րդ հոդվածում որպես օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետ է սահմանվել պաշտոնական հրապարակումից երեք ամիս հետո, քանի որ սույն նախագիծը շրջանառվել է նույնաբովանդակ դրույթներ սահմանող «Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծին զուգահեռ, որտեղ նույնպես որպես օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանվել է պաշտոնական հրապարակումից երեք ամիս	Առաջարկը ընդունվել է

				<p>հետո: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքն արդեն իսկ 18.06.2020թ. ընդունվել է (ուժի մեջ է մտել 06.10.2020թ.), ուստի սույն նախագծի 2-րդ հոդվածում նշված ձևակերպման անհրաժեշտությունը վերացել է: Վերոգրյալից ելնելով՝ Նախագծի 2-րդ հոդվածում սահմանվել է, որ օրենքն ուժի մեջ կմտնի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:</p>	
--	--	--	--	--	--